

Ա. Ա. ԹՈՓՉՅԱՆ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐՍՎԻԶ
ԴԵՂՆԱԽՏ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

(ԻԿՏԵՐԹՁԵՄՈԳԼՈԲԻՆՈՒՐԻԱ)



519
p-83

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ ՀՐԱՄԱՆ ՀՐԱՄԱՆ
ՅԵՒՆԵՎԱՆ

1939

Ա + Ա + ԹԱՓՀՅԱՆ

JUL 2010

619

թ - 83

մր:

ԿԵՆԴՐԱՆԻՒԵՐԻ ՎԱՐԱԿԻԶ
ԴԵՂՆԱԽՏ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(ԻԿՏԵՐՈՉԵՄՈԳԼՈԲԻՆՈՒՐԻԱ)



ԳԵ ՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ
1939

Պատ. խմբագիր՝ Գր. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Երբագրիչներ՝ Վ. Ավագյան, Հ. Մանուկյան

Մ. С. ТОПЧЯН
Инфекционная желтуха
(Иктерогемоглобинурия)
Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.



277
40

Քլավիստի լիազոր՝ №—1118. Հրատ. № 4981.
Պատվեր 435, Տեղամ 2000.
Փուղթ 62×94 Տպագր. 3/4 մամ.
Մեկ. մամ. 38.400 նիշ
Հանձնված և արտադրության 31 հուլիսի 1939 թ.
Ստորագրված և տպագրության համար 29 սեպտեմբերի 1939 թ.
Գետէրատի 1 առաջան, Յերևան, Լենինի, 65

ԻՆՉ Ե ՎԱՐԱԿԻՉ ԴԵՂՆԱԽՏԸ

Վերջին մի քանի տարվա ընթացքում Խորհրդային Միության առանձին հանրապետություններում ու շրջաններում, գրլիավորապես Հյուսիսային Կովկասում, ինչպես նաև մեզ մոտ Հայաստանում, նկատվում ե կենդանիների դեղնախտ՝ իկտերունկությունուրիա կոչվող վարակիչ հիվանդությունը:

Դեղնախտով հիվանդանում են մեծ մասամբ բոլոր հասակի խոշոր ու մանր յեղջերավոր կենդանիները: Բայց նկատված ե, վոր ավելի հաճախ հիվանդանում են մատղաշ հորթերը, սկզած 3—5 որական հասակից, վորոնք համարյա 100% մահանում են:

Բացի խոշոր ու մանր յեղջերավոր կենդանիներից, այս հիվանդության յենթակա յեն նույնպես սմբակավորները և սակավ դեպքերում՝ խողերը:

Դեղնախտը Հայաստանում հայտաբերվում և դաշտային, նախալեռնային ու լեռնային գոտիներում, տարվա բոլոր յեղնակներին, ավելի սաստկանալով ամառը, այսինքն՝ արտօն ըրջանում:

Դեղնախտը վարակիչ հիվանդություն և համարվում այն պատճառով, վոր հիվանդությունը հիվանդ անասունից առողջին և անցնում, մեկ վարակված հոտից մյուսին, մի տնտեսությունից տեղափոխվում և մյուսը, յերբեմն ընդունելով համաճարակային բնույթ: Հիվանդությունն ունենում և յերկարագու ընթացք, վորից առողջացած կենդանիները չափից գուրս հյուծվում են և չնայած նրանց լավ խնամքին ու կերակրման, յերկար ժամանակ չեն կազմուրվում: Այդ տեսակետից դեղնախտը, ինչպես և մյուս վարակիչ հիվանդությունները, պետք ե համարել սոցիալատական անառնապահության համար գլխավոր չարիքներից մեկը, վորը խոշոր տնտեսական կորուստ և պատճառում:

Հիվանդությունը դեղնախտ և կոչվում այն պատճառով, վոր հիվանդացած կենդանիների վրա ցայտուն կերպով արտահայտ-

վում և տեռանելի լորձաթաղանթների սաստիկ գեղնություն, ինչպես որինակ, աչքերի, բերանի և հեշտոցի, իսկ սպիտակամազ կենդանիների վրա պարզ նկատվում է նաև մաշկի գեղին գունավորում, բացի այդ, գեղնախտով հիվանդ կենդանու մեղը հաճախ կարմրագույն և լինում:

Դեղնախտ հիվանդության հարուցիչը դեռ մինչև այժմ չի հայտարերված, բայց համաձայն հիվանդության ընթացքի ուսումնագործման, պետք և յենթադրել, վոր հիվանդությունը տարածվում և հիվանդ կամ նոր առողջացած կենդանիների և առողջների շփման հետեւանքով:

Դեղնախտ հիվանդությունն ընթանում և յերկու ձևով թեթև ու ծանր: Թեթև գեղքերը կենդանու տիրոջ համար հտածախ աննկատելի և առանց բուժական միջամտության են անցնում, իսկ ծանր գեղքերը հաճախ մահացու յելք են ունենում: Ինչպես վերևում հիշեցինք, գեղնախտ հիվանդությունը նոր հիվանդություն և, վորը կատարելապես դեռ չի ուսումնագործմած: Ներկայում ել դեռ շատ տեղերում այդ հիվանդությունը շփոթում են կենդանիների պիրոպլազմող կոչվող հիվանդության հետ և վարակի տարածումը կանխելու համար համապատասխան միջոցառումներ ժամանակին չեն ձեռնարկում: Ուստի այն բոլոր դեղքերում, յերբ կենդանիների արյունամիզություն ու լորձաթաղանթների գեղին գունավորում և նկատվում, անհրաժեշտ և անմիջապես անասնաբուժական ոգնության դիմել, վորպեսի հիվանդությունը ձգվիտ կերպով ախտորոշվի և համապատասխան միջոցառումները ժամանակին ձեռնարկվեն:

ԴԵՂՆԱԽՏՈՎ ՏԱՌԱՄՈՂ ԿԵՆԴԱՆՈՒ ԱՐՏԱԲԻՆ (ԿԼԻՆԻԿԱԿԱՆ) ՆՇԱՆՆԵՐԸ

Հիվանդությունը հաճախ սկսվում և մարմնի ջերմության չնշն բարձրացումով, վորը կարճ ժամանակվա (1—2 որվա) ընթացքում, կլինիկական նշանների զարգացման հետ, իջնում և մինչև նորմալի և հետագայում մինչև կենդանու առողջանալը կամ մահանալը, այևս չի բարձրանում:

Հիվանդ կենդանիները դառնում են գանդաղաղաժ, տիսուր, ուղղի որերն ախտորժակից զրկվում են, կեր չեն ուտում, բայց չուր խմում են. կովերն ուղղրում կաթը պակասեցնում են, կաթը դեղնագույն ու թանձր և գառնում, իսկ հետագայում միանդամայն դաղարում են կաթ տալուց:

Հիվանդության առաջին որերից սկսում է զարգանալ սահմանագործություն, իսկ ծանր հիվանդները մկանային դող ու քթից գեղնավուն լորձահսություն են ունենում:

Կերից հրաժարվելուց կամ կաթնասպության նվազումից 1—2 որ հետո արյունամիզություն և հայտաբերվում, սկզբում բաց, հետագայում մուգ-կարմրագույն և գեղնավուն յերանգով: Կենդանին միզելիս մեջը կորացնում ու տնօրում ե:

Հիվանդության սկզբում տեսանելի լորձաթաղանթների մեջմ գեղնություն և նկատվում, վորը հետագայում արյունամիզության հետ գուգընթաց ավելի մուգ գեղնագույն եղանում:

Խոշոր կենդանիների արյունամիզությունը մոտ 4—5 որ, յերեմի 8—10 որ և անում, իսկ լորձաթաղանթների գեղնությունը՝ ավելի յերկար և անհետանում և աստիճանաբար:

Մեծահասակ կենդանիների հիվանդության վերջում հաճախ 12—15-րդ որը, մարմնի մաշկի նուրբ մասերի կոշտացում և վերնամաշկի խավաթափում և նկատվում:

Կուրծի, պտուկների, քթի, ականջների և մարմնի այլ մասերի մաշկի վրա մահացած մասեր են առաջանում, վորոնք հետագայում տարբեր մեծության կտորներով անջատվում ու թափվում են:

Հիմնականում մաշկի վերնաշերտը, բայց կարող են մահանալ նաև ականջներն ու յեղջուրները:

Յերեմի մի շարք կենդանիների համարյա ամբողջ մարմնի վրա վերնամաշկի մահացում և նկատվում:

Մատղաների (հորթերի և գառների) հիվանդությունը սովորաբար ավելի կարճամա (3—5 որ) և լինում և յեթի նըանք գուռանասնաբուժական վատ պայմաններում են գտնվում, համարյա 100°/0-ով մահանում են:

Խոշոր կենդանիների մահացության տոկոսը կազմում է 10—20:

ԴԵՂՆԱԽՏԻՑ ՍԱՏԿԱԾ ԿԵՆԴԱՆՈՒ ԴԻԱՀԵՐՁՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Կենդանու դիակի արտաքինից նկատվում է լորձաթաղանթների, մաշկի անմաղ մասերի և ականջների ներսի կողմի դեղնություն: Գիահերձման ժամանակ հաճախակի ամբողջ դիակի մաշկի, յերթամաշկային բջջանքի, մկանների, բոլոր ներքին

Արգանների և անգամ վոսկրապատակի սաստիկ արտահայտված դեղնություն և հայտաբերվում:

Լյարդը նորմալ կամ շատ քիչ ուռած ե, լեզապարկը համարյա միջտ 2—3 անգամ մեծացած և հաճախ թանձր, մուլկանաշագույն-դեղնավուն լեզիով և լցված: Փայծաղը նորմալ կամ քիչ ուռած և լինում և չի մեծանում այնպես, ինչպես սիրերախտ ու պիրոպլազմող հիվանդությունների ժամանակ:

Սաստիկ բորբոքված են լինում յերիկամները, վորոնք ծավալով մեծացած են լինում, շականակագույն և բծավոր արյունաղեղումներով ցանված:

Յերիկամների պատիճը (շապիկը) շատ հեշտությամբ անշատվում ե, յերիկամը դանակով կիսելիս հյութալի յե, կեղեային ու միջուկային խավի սահմանները պարզ չեն տարբերվում: Յերիկամների շուրջը գտնվող հյուսվածքներն ավելի բորբոքված են լինում:

Միզափամփուշտը միշտ լցված և լինում արյունախառն մուգ կարմրագույն պղտոր մեղով, առանց լորձաթաղանթի նկատելի փոփոխության: Ստամոքսաղիքային որգաններում առաջին հերթին նկատվում ե գրքույկի քարացում, վորը լցված և լինում չոր կերով: Շրդանի և 12-մատնյա աղիքի լորձաթաղանթները ուռած ու կարմրած են լինում, հաճախ տեղափեղ բծավոր կամ յերիկավոր արյունաղեղումներով ցանված:

Հաստ ու բարակ աղիքների լորձաթաղանթները նույնպես ուռած են լինում: Աղիքներին կից գտնվող ավշագեղները նույնպես ուռած են լինում և կտրելիս հյութալի յեն:

Մնացած մյուս որգաններում պարզ աչքով նկատելի ախտաբանական փոփոխություններ չեն լինում:

ԻՆՉՊԵՍ Ե ԱԽՏՈՐՈՇՎՈՒՄ ԴԵՂՆԱԽԾԸ ՑԵՎ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՈՒՐԻՇ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Շատ տեղերում դեռ մինչև այժմ ել, յերբ ամառը, արոտային շրջանում խոշոր յեղիքավոր անասունների արյունամիզությունն ե նկատվում, պիրոպլազմող հիվանդության են վերսպրում այդ, բայց պետք ե հիշել, վոր արյունամիզություն կարող ե լինել թե պիրոպլազմողից և թե գեղնախտից, ինչպես նաև պատահական պատճառներից՝ որինակ՝ ծանր աշխատանքից:

Մեղ հայտնի յե, վոր պիրոպլազմող հիվանդությունը տա-

րածողն ու վարակը փոխանցողը միմիայն տղերն են և յեթե պիրոպլազմողով հիվանդ կենդանու արյունը քննենք մանրաղիտակի միջոցով, արյան կարմիր գնդիկների մեջ կնկատենք նրա հարուցիչները՝ տանձածե պիրոպլազմներ: Իսկ ինչ վերաբերում է գեղնախտով հիվանդ կենդանու արյան քննության, այդպիսի հարուցիչներ չեն հայտաբերվում:

Պիրոպլազմող հիվանդությունը նկատվում է միմիայն տղերով վարակված՝ վայրերում, իսկ գեղնախտը՝ նաև տղերից ազատ վայրերում:

Պիրոպլազմողով հիվանդ կենդանու մարմնի շերմությունը բարձրացած և լինում մինչև 41° և ավելի, իսկ գեղնախտի ժամանակ միայն առաջին որերն ե կենդանու շերմությունը բարձրանում, իսկ հետագայում միշտ նորմալ և լինում:

Պիրոպլազմողով հիվանդ կենդանու տեսանելի լորձաթաղանթները գեղնավուն յերանդ են ունենում, իսկ գեղնախտի ժամանակ՝ սաստիկ արտահայտված գեղնություն ե լինում:

Պիրոպլազմողով առողջացած կենդանիների վերնամաշկի խավաթափում կամ մաշկի մահացում վոչ մի գեպքում տեղի չի ունենում, այնինչ գեղնախտի ժամանակ նման յերևույթները տարբեր կենդանիների վրա տարբեր աստիճանի յեն լինում և հաճախակի յեն նկատվում:

Դիահերձման ժամանակ պիրոպլազմողով մահացած կենդանու փայծաղը 1¹/₂—2 անգամ մեծացած և լինում, իսկ գեղնախտի ժամանակ փայծաղը համարյա նորմալ և մնում:

Բացի դրանից, մեղ հայտնի յե, վոր պիրոպլազմողով հիվանդանում են սովորաբար ավելի մեծահասակ կենդանիները: Մատղաները հիվանդությունն ավելի թեթև են անցկացնում և մահացության գեպքերը քիչ են լինում, իսկ գեղնախտով մատղաշներն ավելի շատ են հիվանդանում և մեծ տոկոս մահացություն են տալիս:

Դեղնախտը սիրելախտից տարբերվում է հետեւյալ նշաններով. սիրելախտով հիվանդ կենդանու մարմնի շերմությունը բարձրանում և մինչև 40—42°, հիվանդության տեղողությունը շատ կարճ, յերբեմն՝ մի քանի ժամ և լինում: Շատ գեպքերում կենդանին, վորն արտաքուստ առողջ և յերևում, հաճակարծ ջղաձողություններ ունենում, սկսում ե խոմֆալ, քթից ու բերնից արյունախառն փրփուր և գալիս, սրբանից արյուն և հոսում և կարձ ժամանակում կենդանին սատկում ե: Կենդանուն դիա-

հերձելիս, փայծաղը խիստ մեծացած են գտնում, արյունը կալի
նման սեվացած, վորը յերբեք չի մակարդառում (լերպանում), իսկ
միկրոսկոպիկ հետազոտության ժամանակ արյան մեջ հայտա-
բերում են հատուկ հարուցիչներ, վորոնք սիրիակախտի մասնի-
նոր են կոչվում:

Դեղնախտի դեպքում վերտիշյալ նշաններից վոչ մեկը չի
լինում:

Ինչ վերաբերում ե մյուս վարակիչ հիվանդություններին,
ինչպիսիք են պարատիֆը և արյունահոս սեպտիցեմիան, գրանց
ժամանակ մարմնի բարձր ջերմություն, թոքերի և ստամոքսա-
ղիքային տրակտի բորբոքում, վորը ուժ և այլ յերեվույթներ են
նկատվում, իսկ միկրոսկոպիկ հետազոտությամբ հայտարերում
են համապատասխան հարուցիչներ, վորոնք դեղնախտի ժամա-
նակ բացակայում են:

Ամենաբնորոշ տարբերությունը՝ զա լորձաթաղանթների
գեղին գունավորումն ե և արյունամիզությունը, վորոնք սիրի-
ոսխտի, պարատիֆի և արյունահոս սեպտիցեմիայի ժամանակ
յերբեք չեն լինում:

ՀԻՎԱՆԴ ԿԵՆԴԱՆՈՒ ԲՈՒԺՈՒՄԸ

Դեղնախտով հիվանդ կենդանուն հենց հիվանդության
ոկզրից առողջ կենդանիներից պետք է անմիջապես անջատել,
մեկուսացնել և նրանց նկատմամբ հետեւյալ միջոցառումները
կիրառել:

Քանի վոր մեղ հայտնի յե, վոր ալյալ հիվանդության
դեպքում ուժեղ փորկապություն և զրբույկի քարացում ե զար-
գանում, անհրաժեշտ ե փորկապությունը ժամանակին կանխել
լուծողականի գործադրությամբ, տալով խոշոր յեղջերավոր կեն-
դանիներին մինչև մեկ կիլոգրամ, ձիուն՝ մինչև 500 գրամ
դլառերյան աղ միանվագ:

Մատղաշ հորթերին, մարուկներին ու վոչխարներին վորեն
բուսական յուղ (գերչակի ձեթ) կամ 100 գրամ զլառերյան
աղ են տալիս: Յեթե լուծողականն առաջին անգամից աղղեցու-
թյուն չունեցավ, ապա պետք ե կրկնել, վոր ստամոքսաղիքային
տրակտն անպայման մաքրվի. հետագայում, անսանաբուժի
ցուցումով, լավ ե տալ նաև կարլուաղի աղ:

Հիվանդ կենդանու սրտի գործունեյությունը կանոնավո-
րելու համար ոգտակար ե գործադրել կոֆեին, կամֆորա,
մատնուկի տերեներ և այլն, վորոնց չլինելու դեպքում այդ

դեղերը կարելի յե փոխարինել մի թեյի բաժակ ջրախան ողիով:
Ամբողջ հիվանդության ընթացքում բուժումը պետք է
գործադրել հիվանդության նշանների համապատասխան:

Սպեցիֆիկ ախտահանիչ գեղերից բարերար աղղեցություն
և ունենում «նովարենոլը», վորը գործադրում է անտանաբուժը
յերակային ներարկման ձևով, միանվագ:

Նովարունովի բուժական աղղեցությունը եփփեկտիվ ե
լինում բացառապես այն դեպքերում, յերբ ներարկումը շատ
շուտ, հիվանդության հենց առաջին որն և արգում, իսկ յերբ
արգեն յերեան են յեկել գեղնությունը և արյունամիզու-
թյունը՝ դրական արդյունք չի ստացվում:

Դեղնախտով հիվանդ կենդանու նկատմամբ լավ խնտմքը
և կերակրումը խոշոր նշանակություն ունի: Հիվանդին անհրա-
ժեշտ ե դյուրամարս, հյութալի կեր, թարմ ջուր տալ, չոր և ա-
ռատ ցամքար փոել, մաքուր սանիտարական պայմաններ ստեղ-
ծել և միջանցիկ քամիներից ու խոնավությունից պաշտպա-
նել:

ԴԵՂՆԱԽՏ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱ- ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԶԵՐՆԱՐԿՈՒՄԸ ՏԵՂՈՒՄ

1. Բոլոր դեպքերում, յերբ նկատվում է նշված հիվանդու-
թյունը, հիվանդ և հիվանդությունից կառկածելի կենդանիներին
անմիջապես պետք է առողջներից անջատել, տեղափոխել մեկու-
սարան և այդ մասին հայտնել անառնաբուժական կազմին,
վորպեսի գեղնախտի տարածումը կանխելու և հիվանդությունը
տնտեսությունից շուտ վերացնելու համար համապատասխան
շատապ միջոցառումներ ձեռնարկվեն:

2. Ինչպես վերեւում հիշեցինք, հիվանդության ոկզրնա-
կան շրջանում դեղնախտը կարելի է պիրոպլազմոզի հետ շփո-
թել այդ իսկ պատճառով անհրաժեշտ ե վերջինը բացառել՝
հիվանդի արյան միկրոսկոպիկ քննություն կատարելով:

3. Ներկայումս, համաձայն Միութենական Հողժողկոմատի
1937 թվի հրահանգի, վարակիչ գեղնախտի յեզակի դեպքերի
ժամանակ կարանտին և հայտարարվում այն տնտեսությունում
կամ նրա առանձին մի մասում (Փերմայում, ախոռում, գոմում

կամ բակում), վոքաեղ հիվանդությունն և հայտաքերգած, իսկ յեթե հիվանդության յեղակի դեպք հոտում և լինում, կարանտինն ամբողջ հոտի վրա յե դրվում 90 որ ժամանակով:

4. Համաձայն անառնաբուժառանիտարական որենսդրության, կարանտինի միջոցին, անապահով տնտեսությունը նոր կենդանի բերելը կամ տնտեսությունից դուրս հանելը խօսիվ արդելվում ե:

5. Առանց անառնաբուժի թույլտվության կարանտինի միջոցին արգելվում ե անառուն մորթել, դիակներից կաշին հանել, տնտեսության ռահմաններից անառնակեր կամ անառնահումույթ (կաշի, բուրդ, մազ, յեղյուր, վուկոր և այլն) դուրս տանել, ինչպես նաև կաթ և կաթնամթերք տեղափոխել:

6. Կարանտին դրված կետերում անառնակերը (խոտը) կարելի յե մթերել այն տեղամասերից, վորտեղ գեղնախտով հիվանդ կենդանիներ տվյալ տարվա ընթացքում չեն արածել, կերը պետք ե արտահանել ավտո-տրանսպորտով:

7. Այն տնտեսություններում կամ հոտում, վորտեղ հայտաբերվել ե այս հիվանդությունը, անհրաժեշտ ե բոլոր կենդանիներին մանրամասնորեն հետազոտել և ջերմաչափել: Բոլոր կառկածելի (բարձր ջերմությամբ) կենդանիների նկատմամբ անհրաժեշտ եանասնաբուժական հատուկ հակողություն ռահմանել:

8. Հնարավոր գեպքում լավ ե առողջ կենդանիների արոտավայրը փոխել, իսկ յեթե տնտեսության հնարավորությունները ներեն՝ բոլոր կենդանիներին կարելի յե 10—15 որով կապած պահել:

9. Մեկուսարանի և առհասարակ բոլոր առողջ կենդանիների գոմերի մուտքի դռան շեմքում անպայմանորեն պետք ե մի տաշտ գրվի, վորի մեջ կրեոլինի լուծույթն անպակաս պիտի լինի, վոր ներս ու դուրս գնացողները վոտներն ախտահանեն:

10. Մեկուսարանում պիտի լինի լվացարան, ոճառ և ախտահանիչ լուծույթ, վորպեսզի ռպասարկող կազմը ապահոված լինի ձեռները լվանալու և ախտահանելու հնարավորությամբ:

11. Մեկուսարանում գտնվող հիվանդների խնամողը տնտեսության մեջ գտնվող այլ անառունների հետ վորեն շփում չպիտի ունենա:

12. Հիվանդ կամ կառկածելի կովկերի կաթը պետք ե գործածել յեռացրած վիճակում, իսկ նրանց հորթերին պետք ե կերակը առողջ կովկերի կաթով:

13. Դեղնախտից առողջացած կենդանիներին մեկուսարանից դուրս բերելուց հետո չպետք ե խառնել ընդհանուր հոտին, այլ պահել առանձին, առողջ կենդանիներից հեռու, նկատի ունենալով այն հանգամանքը, վոր այդպիսիները դեռ յերկար ժամանակ՝ մինչև 90 որ կարող են վարակ տարածել:

14. Համաձայն գոյություն ունեցող հրահանգի, դեղնախտից առանձին կենդանիների կաշին, անառնաբուժի հսկողությամբ թույլատրվում ե ախտահանել կրակաթի 10⁰/0 լուծույթի մեջ 24 ժամվա ընթացքում, վորից հետո կաշին կարելի յե գործածել:

15. Դեղնախտից սատկած կենդանու դիակը պետք ե թաղել անառնագերեզմանոցում, առնվազն 2 մետր խորության փոսի մեջ, վոր շներն ու գաղանները դիակը չպատառուեն ու վարակը չտարածեն:

16. Յուրաքանչյուր հիվանդության կամ մահացության գեպքից հետո անհրաժեշտ ե կազմակերպել շենքի, սարքավորման, աղալի, աղբի ախտահանություն, վորեկցի ախտահանիչ նյութով՝ կրեոլինի լուծույթով, չմարած կրով, քլորակրով և այլն:

ՅԵԶՐԱԿՈՅՈՒԹՅՈՒՆ

Ինչպես տեսանք, վարակիչ դեղնախտը մինչև այժմ գեռ կատարելազեն ուսումնասիրված չե:

Գիտությունը գեռ չի հայտաբերել հիվանդության հարուցիչները և վարակման ձանապարհները: Այսպիսով, դեղնախտի գեմ ձեռնարկվող կոնկրետ նախադպուշական և բուժական միջոցառումներն առաջմ լրիվ չեն:

Մի կողմէց ժամանակին և տեղին կիրառվող անառնաբուժառանիտարական ձեռնարկումները՝ մեկուսացումն և այլն, մյուս կողմէց վարակի տարածման առաջն առնելու կապակցությամբ կիրառվող կարանտինային խիստ միջոցառումները հնարավորություն են տալիս հիվանդությունը ժամանակին կանելու:

Դեղնախտի տարածման հիմնական պատճառը—դա կարանտինի և նախադպուշական միջոցառումների թույլ գրվածքն ե: Մեր դիտություններից պարզվել ե, վոր զեղնախտից անապահով գյուղի կենդանիները, կարանտինի կանոնների խախտումի հետևանքով, արոտավայրում զեղնախտից ապահով մյուս գյուղի կենդանիների հետ շփման մեջ լինելով, վարակը փոխանցել են նրանց: այդ իսկ պատճառով անհրաժեշտ ե, վոր մեր կոլանտեսականները գիտակցորեն կատարեն անառնաբուժների բոլոր ցուցումները, մանավանդ այն տնտեսություններում, վորտեղ այս հիվանդությունը գեռ մուտք չի գործել:

Պետք ե ամենախիստ կերպով կիրառել կարանտինի վերահայտ կանոնները և նախադպուշական բոլոր միջոցառումները վարակի հանդեպ՝ մեր սոցանասնապահությունը այդ չարիքեց ապահովելու համար:

ՀՀ Ազգային գրադարան



NL0285824

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

8482

М. С. ТОПЧЯН

Инфекционная желтуха

(Иктерогемоглобинурия)

Гиз. Арм. ССР, Ереван, 1939 г.